

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԳԼԻԱՑԻ ԵՒ ԱՄԻԱՑԻ ՆԱԽԹԱԳՈՐԾՔ

Արդէն մի քանի ամիս է, որ անգլիական «The Shell Transport and Trading Co» ընկ.-թիւնը շրջաբերականներ ուղարկել Հեռաւոր արեւելքի հետ հազորդակցութիւն ունեցող բոլոր շոգենաւային ընկ.-երին, առաջարկելով նրանց ձեռնառու պայմանով հեղուկ վառելիք։ Այդ գրաւիչ առաջարկութիւնից օգտուել ցանկացողը պիտի պարտաւորուի իր շոգենաւներից մի քանիսը (թիւը պիտի որոշուի) յարմարեցնել հեղուկ վառելիքի, և որոշ ժամանակից պիտի սկսի այդ վառելիքը բանացնել, որ իրաւունք չը պիտի ունենայ մի ուրիշից զնելու մինչեւ պայմանագամի լրացնալը։ Իսկ «Շելը» (վերոյիշեալ անգլիական ընկ.-ը) պարտաւորում է հեղուկ վառելիքը տալ պայմանաւորուած նաև երին համաշխարհային համարեա բոլոր նշանաւոր նաւահանգստներում (այստեղ նա 15 նաւահանգիստ է թւում և վառելիքի գինը նշանակում նրանցից ամեն մէկում) և այդ վառելիքը նաև իրին մի ժամում ոչ պակաս քան 100 տոնն (տոննը 61 պուդ է): «Շելը» խոստանում է այդ տասնհինգնդ նաւահանգստին (ուր նա արդէն կազմակերպել է գործը) աւելացնել էլի նոր նաւահանգիստներ, ուր գործը կազմակերպուելու վրայ է, կամ պիտի կազմակերպուի մօտ ապագայում։

Անկանած մի հսկայական զործ է այս, որ ձեռնարկում է «Շելը» Հեշտ բան չէ երկրագնդիս ամեն կողմը վառելիքի առաջին պահեստներ ունենալ և մի այնպիսի կազմակերպութիւն, որ ամեն մի նաւահանգիստը մտնող նաւ մի-երկու ժամում իր վառելիքը ստանայ ու ճանապարհուի... Սակայն անկարելի բան չէ այդ մի բնկերութեան համար, որ արդէն 40-ից աւելի շոգենաւոնի մասնաւորապէս նաւթ տեղափոխելու համար յարմարեցրած և գեռ 14-ն էլ նորերս է պատուիրել։

Քարտածուիը իրրի վառելիք շատ ու շատ անյարմարութալիս, 1902.

թիւններ ունի և երրէք չի կարող մրցել հեղուկ վառելիքի  
(նաւթի կամ մազուտի) հետ, եթէ վերջինիս գները շատ չեն  
թանգ: Եթէ մինչև օրս շոգենաւերը դեռ քարածուխ են զործ  
ածում, դրա միակ պատճառն այն է, որ չէր դուրս գալիս մէկը,  
որ մի որոշ ժամանակով (ասենք հէնց Յ տարավ) պարտաւոր-  
ուէր հայթայթել այդ վառելիքը, ինչպէս այսօր «Ենին» է պար-  
տաւորում: Քարածուխը ահազին տեղ է բռնում շոգենաւե-  
րում, նրա բեռնելը բաւականին ժամանակ է պահանջում, քա-  
րածուխ այրելիս ամեն մի շոգենաւ մինչև 150—160 մարդ է պահում  
մասնաւորապէս վառելիք տանող, բերող, այրող, մո-  
խիրը դուրս տուող և այն, որոնց գործն էլ մի տաժանելի  
բան է: Իսկ հեղուկ վառելիքը տեղ շատ քիչ է բռնում, բեռնելը  
հեշտ ու արագ է, մոխիր չի տալիս և նաւի վրայ՝ փոխանակ  
150—160 մարդու բաւական է 24—25 մարդ, որոնց գործը  
անհամեմատ հեշտ ու մաքուր էլ է:

Անդրկովկասեան երկաթուղին մինչև չը վերջացնի Բա-  
գուից-Բաթում անընդհատ կերոսինանցքը (Կերօսինօպր-  
օնութեան) — անկարող է վառելիք փոխադրել Աև ծովի ափերը:  
Միակ ելքը առ այժմ Պետրովսկ-Նովորոսիյսկ ճանապարհն է  
մնում (մինչև Պետրովսկ էժանութեան պատճառով), ի հարկէ  
ծովով պիտի տանել վառելիքը): Բագուի նաւթարդիւնա  
բերողների «Ժողովի» Պետերբուրգի ներկայացուցիչ Ն. Ն.  
իզնարը «Տօրց. Պրոմ. ԳաՅ.» լրագրի ապրիլի համարներում  
մանրամասն հաշիւներով ապացուցում է, որ նոյն իսկ այդ  
անընական-երկար ու թանգ ճանապարհով, նոյն իսկ այժմեան  
թանգ ճանապարհածախսով, մեր նաւթը կարող է մինչև Պորտ-  
Սայիդ և Ալէքսանդրեա մրցել քարածուխի հետո Բայց պէտք է  
յուսալ, առում է իզնարը, որ Վլադիկավկազեան երկաթուղու-  
վարչութիւնը նոյն իսկ  $2-2^{1/2}$  կոպ. պուղին կը պակսեցնի  
քրահը, եթէ վառելիքի արտահանութեան գործը կազմակերպուի  
Բագուում:

Առ այժմ իզնարը առաջարկում է մի փոքրիկ փորձ անել  
մինչև անընդհատ Բագու-Բաթում կերոսինանցքի բացուելը,  
գործը սահմանափակել երեք կէտում: Նովորոսիյսկ. Ալէք-  
սանդրեա, Պետերբուրգ: Հեղուկ վառելիքը Պետերբուրգ պի-  
տի ուղարկուի, ի հարկէ, Կասպից ծովով, Վոլգայով մինչև  
Ռիբինսկ կամ Եարոսլավլ և ապա երկաթուղով — Պետեր-  
բուրգ, ուր պուղը 30 կոպ. կը նստի, եթէ Բագուում  
10 կոպ. հաշուենք նաւթը: Այսքանա բաւական է, իզնարի  
ասելով, որ Եուսաց շոգենաւային ընկեր պայմանաւորուի տա-  
րին մինչև և միլիոն պուդ վառելիք վերցնել, եթէ նախօրօք

որոշ զին նշանակուի ամեն մի նաւահանգստի համար, ինչպէս  
«Շելն» է անում: Ապագայում, երբ արդէն կերռսինանցքը պատ-  
րաստ կը լինի և Անգրկովկասեան երկաթուղին հնարաւորու-  
թիւն կ'ունենայ մեծ քանակութեամբ վառելիք փոխադրել  
ձեռնատու գնով Բաթում, կարելի կը լինի գործը լայնացնել:

Այս բոլորը, ի հարկէ, հնարաւոր է միայն ընդհանուր,  
հաւաքական ուժերով: Կազմակերպութիւն է հարկաւոր մի  
այդպիսի հսկայական նախազիծ իրադարձելու համար... իսկ մեր  
նաւթագործները ամեն մի գործ Կռիլովի սայլի օրն են զցում,  
որ իր տեղն է մնացել մինչի օրս, որովհետև կարապը երկինքն  
է թռչում, ձուկը դէպ ծովն է քաշում, իսկ խեցգետինը յետ-  
յետ է գնում...

Նաւթագործների վերջին ժողովը միաձայն վճռեց, որ  
պէտք է կազմակերպել կերռսինի արտահանութեան գործը, Կոն-  
սոլիդէտի ճիրամներից աղատուելու համար, սակայն մինչև օրս  
խօսքից գործի դեռ չենք անցել... Քիչ չէ խօսուել ամբարների  
անհրաժեշտութեան մասին: Վերջերս նոյն իսկ յոյս կար կա-  
րեսը փոխափնութիւնը երկրագործութեան մինիստրութիւնից  
ստանալ (Նաւթագործների գրաւականներից), սակայն, երբ  
խնդիրքը արդէն պատրաստ էր, Նորէլի և Կասպեան-Սև ծո-  
վեան ընկ. (Ռուսիլդ) ներկայացուցիչները հրաժարուեցան ստո-  
րագրելուց... որովհետև իրանք ահազին ամբարներ ունեն ար-  
դէն և նաւթը շատամալուն պէս հաւաքում են իրանց ուզած  
էժան գներով, որ ի հարկէ, անկարելի կը դառնայ, երբ ուրիշ  
ամբարներ էլ շնուրեն Բագուի շրջակայքում:

ի.